

ՆՈՐ ԱՎԵԾԱՔԵՐ

Բ. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, 10 ՕԳՈՍ., 1929

ԹԻԻ 16

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ի՞նչ Կ'ընենք

ՏՐ. Ճ. Է. ՄԷՐԻԼ

ՕԴՈՒԱԾՆԵՐ

ՏՐ. Դ. ԵՌԻԻ

ՎԵՐ. Է. ՓԱՐԹՐԻՃ

ՅԻՍՈՒՍ ՄԵՐ ԲԱՐԵԿԱՄԸ

ԹՐԳՄ. ՏԻԿ. Վ. ՊԷԿԵԱՆ

ԻԳԱԿԱՆ ՍԵՌԸ ԵՒ ԱՆՈՐ ԴԵՐԸ

ՏԻԿ. Ա. Ն. ՇԻՐԻՔՃԵԱՆ

ՍՍԻԱՌՆԱԿԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

Տ. Ճ. ԽՐԼՈՐԵԱՆ

ԵՕՂՈՒՆ-ՕԼՈՒԴԻ ԱԻԵՏ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ Կ. ԴՈՒՆՏԱՔՃԵԱՆ

ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ԶԵԻԵՐԸ

Ճ. Ո. Հ.

ԿԵԱՆՔԻ ՇՈՂԵՐ

ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287, ALEP, SYRIE

«ՏՊԱՐԱՆ ԳՈՂԵՃ» ՀԱՆԷՊ

ՆՈՐ ԱԻԵՏԱԲԵՐ

Կրօնաբարոյական, կրթական գիտական պարբերաթիւրթ.
 Սրտօնատէր Վեր. Կ. Յ. Յարութիւնեան
 Տնօրէն—Խմբագիր Տ. Ճ. Խրլոբեան

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.—

Սուրիա, տարեկան 1.50 Սուրիական ոսկի:
 Արտասահման, տարեկան 1.50 տոլար:

ՇՆՈՐՀԱՎԱՆՈՒԹԻՒՆ

Այրի Տիկ. Մէննուշ Խարաճճեան և
 Զաւակունք, իրենց ամուսնոյն և հօր
 մահուան առթիւ, անձամբ ծաղկեփուն-
 ջով նամակով և օգնութեամբ ցաւակ-
 ցութիւն յայտնող բարեկամաց և ազ-
 գականաց, իրենց խորին շնորհակալու-
 թիւնները կը յայտնեն:

ՍՏԱՅԱՆՔ

1. ԶՈՐՍ ԱԻԵՏԱՐԱՆՆԵՐԸ

Դրեց՝ ՂԵՒՈՆԴԵՊՍ. ԴՈՒՐԵԱՆ, հոգ.
 հովիւ հայոց Մանչէսթրի, Բ. տպագ-
 րութիւն, գին՝ շիլին 1.6:

2. ԾԽԱԽՈՏԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՒ ԶԱՐԴԱՑՈՒՄԸ

Դրեց Տօքթ. Ա. Ապուհայաթեան,
 գին Սուրիոյ համար 20 դրշ. Սուր.,
 արտասահման՝ 5 ֆրանկ. գիմել հեղինա-
 կին 55, Boulevard de France, Alep.

ՓՈՒԱՆ ԸՆԿԱԼԱԳՐԻ

(Ի հաշիւ 1929ի բաժնեկրիին)

Տիարք Նազար Աբօշեան, Հալէպ,
 1.50 Սուր. ոսկի, Յովհ. Սարգիսեան,
 Ալեքսանդրէթ, 1.50 Սուր. ոսկի, Բիւ-
 զանդ Եղիաեան, Ժընէվ, 1.50 Սուր.
 ոսկի, Մանուէլ Գրաճեան, Շիրազ,
 111.25 դրշ. արծաթ, Երուանդ Կէյիկ-
 եան, Մուսուլ, 110 դրշ. արծաթ,
 Յովհ. Յովհաննէսեան, Գըրըզ-խան,
 50 դրշ. արծաթ, Տօքթ. Ա. Ճէպէճեան,
 Հալէպ, 195 դրշ. արծաթ, Տօքթ. Ն. Տ.
 Պօղոսեան, Գըրըզ-խան, 75 դրշ. ար-
 ծաթ, Վեր. Ա. Շիրաճեան, Հալէպ,
 1.50 Սուր. ոսկի, Վեր. Մանուշակեան,
 Նեկոսիա, £ 1-5.0, Վեր. Հ. Աշճեան,
 Շիզափօ, 3 տոլար:

ԱՄՈՒՍՆԱՑԵԱԼՔ

Տիար Լ. Հէքիմեան, Boys' High
 School ի գիտական զասերու ուսուցիչ,
 ընդ օր. Անժէլ Պէշճեանի, զուտրը
 փրօֆ. Զ. Ա. Պէշճեանի, Մեր շնորհաւո-
 րութիւնները:

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Բ. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, 10 ՕԳՈՍ., 1929

ԹԻԻ 16

ԽՍԲԱԳՐԱԿԱՆ

ԽՆՁ Կ'ԸՆՆԵՔ

Նախկին Կիրիկիոյ Միութեան եկեղեցիները, որոնք հարաւային Անատոլիոյ, Կիրիկիոյ եւ հիւսիսային Սուրիոյ մէջ հաստատուած էին, ներկայիս Սուրիոյ մէջ եւ Մեծն Լիբանանի մէջ աւետարանական եկեղեցիներու խումբ մը կը կազմեն: Մեր Միութեան կազմակերպութիւնը պահուած է. բայց ճշմարիտ միութեան մէջ կազմակերպութիւնը հասարակաց կեանքի, գիտակցութեան, նպատակի եւ գործունէութեան համար ձեւ մըն է միայն: Իբր Միութիւն մը ի՞նչ կը խորհինք, կը ծրարորենք եւ կը կատարենք:

Պատերազմէն առիւն բոլոր աշխարհիս վրայ ամենատկար աւետարանական խմբակցութիւններն անգամ զարգացած են ինքնագիտակցութեան մէջ: Մենք աւետարանական ինքնագիտակցութեան կը կարօտինք: Այս աւետարանական խմբակները Եւրոպայի եւ Ամերիկայի հին եւ մեծ եկեղեցիներուն կողմանէ ազնուօրէն ընդունուած են իբր հաւասարներ եւ ընկերներ Քրիստոսի համար աշխարհապարփակ գործունէութեան մէջ: Վերջերս գումարուած երուսաղէմի ժողովին մէջ աւելի նոր եկեղեցիներէն պատուիրակներ կային, որոնք ընդունուեցան անդամակցութեան լման իրաւունքովը: Սուրիոյ եւ Պաղեստինի Միացեալ Միսիօնարական Խորհուրդը որոշած է Սուրիոյ եւ Պաղեստինի աւետարանական եկեղեցիներ-

ուն տարբեր կազմակերպութիւնները իրեն անդամակցելու հրաւիրել, հասարակաց աւետարանական նպատակի մը հիման վրայ: Բոլոր աշխարհիս վրայ այս աւետարանական Միութիւններէն իւրաքանչիւրը կ'աշխատի Քրիստոսի Թագաւորութեան յաւաքանալուն համար: Ահաւասիկ մի քանի օրինակներ, ոմանք մեծ իսկ ոմանք փոքր:

Ձինաստանի մէջ բնիկ եկեղեցիները աւետարանական շարժումին կազմակերպութեան բոլոր գործը իրենք ստանձնած են: Անոնք կ'աշխատին Ձինացիներուն ցուցնել թէ ճշմարիտ քրիստոնեայ մը ճշմարիտ Ձինացի մը եւ լաւագոյն Ձինացի մըն է:

Մատակասքարի մէջ բնիկ եկեղեցիները հիւզէ հիւզ աւետարանական պատոյտ մը կատարած են կղզիին բոլոր գիւղերուն մէջ, ուր բնակչութեան հարիւրին 90ը ոչ-քրիստոնեայ են:

Պարսկաստանի մէջ տարբեր յարանուանութիւններէ բնիկ եկեղեցիները միասնաբար կը ծրարեն աւետարանական գործունէութիւն մը ունենալ այդ երկրին մէջ:

Հարաւային Ամերիկայի մէջ աւետարանական քրիստոնեաները՝ Քրիստոսն ու քրիստոնէական կեանքը իբր կենսական բան մը կը ներկայացնեն ժողովուրդին, որոնց համար կրօնքը պարզապէս ձեւականութիւն մ'է կամ որոնք կրօնքը մէկ կողմ դրած են:

Ճաբոնի մէջ ծրարուած է թերթերու մէջ ծանուցումներով քրիստոնէական կրթութիւն տալ, իւրաքանչիւր ծանուցում 100 պատասխաններ կը պա-

բունակէ: Աւետարանական քրիստոնեաները, Պուտոտայականներու եւ Շինթոյականներու հետ միասին խորհրդակցած են Ճաբոնի մէջ աշխարհիկ ոգիին դէմ պայքարելու համար:

Հնդկաստանի մէջ տարբեր յարանուանութիւններէ բոլոր աւետարանականները երկու մեծ միացեալ եկեղեցիներ կը կազմեն, մէկը Հիւս. Հնդկաստանի եւ միւսը Հար. Հնդկաստանի մէջ, որպէսզի բոլոր Հնդկաստանի մէջ յարանուանական տարբերութիւնները գոյութենէ դադրին:

Ռուսիոյ մէջ, հակառակ կառավարութեան ամէն կրօնքը կործանելու ջանքերուն, աւետարանականները քրիստոնէութիւնը կը քարոզեն եւ կ'ապրին իբր անձնական հոգեւոր կեանք մը:

Ասոնք ոսկաւաթիւ օրինակներ են միայն: Անոնց վրայ ակնարկ մը կ'ըստիպէ մեզ նայիլ մեր վրայ: Մեք ինչ կ'ընենք:

1. Կրնանք Աստուծոյ փառք տալ մեզի տրուած առիթին եւ ոյժին համար որ բան մը ընել կարենանք: Վերջին միջանի տարիներուն միջոցին վերահաստատման մեծ գործ մը կատարուած է: Ամեն ոք իր անձնական խնդիրները ունեցած է, բայց այս բոլորին հակառակ՝ եկեղեցական գործը դարձեալ սկըսած է եւ գպրոցները վերաբացուած են: Այս վերահաստատման գործին մէջ, որ առաջին աստիճանի կարեւորութիւն մը ունեցած է, արտաքին առատաձեռն նիւթական օգնութիւնը անհրաժեշտ եղած է: Այս գործին վերջին քայլը եղած է Հալէպի մէջ Գուլէճի վերաբացման որոշումը:

2. Վերոյիշեալ գործին հետ միժապէս զարգացած է նաեւ երիտասարդներու հետ եւ երիտասարդներու համար

ներ գործ մը: Մեծ եւ լաւ կազմակերպուած Մանկանց Կ. գպրոցներ եւ մեծ Ե. Ք. Զանից ընկերութիւններ հաստատուած են, որոնք այսօր եկեղեցական գործին մէկ կանոնաւոր մասը կը կազմեն: Նպատակ կ'այ այս մասը աւելի զօրացնելու համար:

3. Աւետարանական ժողովուրդին կեանքը, մանաւանդ քաղաքներու մէջ, այնպիսի ձգտումներ ունի որ իրենց շուրջը ապրուած ընկերային կեանքէն կը տարբերին: Հալէպի մէջ, զոր օրհալսանեկան եւ նշանտուքի մասին կանոնագիր մը վերստին ընդունուած է, պատերազմէն առաջ Այնթապի եւ Մարաշի մէջ կիրարկուածին նման, եւ թաղումներու մէջ տեսնուած խաղաղութիւնը եւ ցոյցի չգոյութիւնը յաճախ զիտողութիւններու տեղի տուած է: Կիրակնօրեայ զբաղումներու եւ գրոսանքներու դէմ զգացումները զօրացած են:

4. Պէտք մը կ'զգացուած է ձեւելու եւ ուրիշներուն յայտնելու այն հիմնական կէտերը՝ որոնց համար զոյ է աւետարանական շարժումը: «Նոր Աւետարներ» ի վերջին թիւերուն մէջ գրուած է այս մասին: Անիկա ծառայութիւն մըն է եկեղեցիներուն, անոնց գաղափարը ըստակ եւ թարմ վիճակի մէջ դնելու համար. առիկա անհրաժեշտ էր նաեւ ուրիշներուն համար:

5. Աւետարանական գործին մէջ հետաքրքրութիւնը եւ գործունէութիւնը կը զարգանայ, այն իմաստով որ Քրիստոսը զինքը չճանչցողներուն ծանօթացուի: Տարագրութենէն ի վեր համագումր գոյացած է թէ մեր գոյութեան իրական նպատակը այս պէտք է ըլլայ, եւ կրնայ ըլլալ որ մեր եղած տեղը զըտնուելուն աստուածային պատճառն ալ այս է:

Այս բաներուն և ոչ մէկուն մէջ կատարեալ ենք: Բայց աւելի կարեւոր հարցը սա է թէ տրդեօք ասոնք այնպիսի նպատակնե՞ր են՝ զորոնք մենք ալ անձնապէս կը բաժնեք: Իբր աւետարանական եկեղեցիներ մենք ի՞նչ կընենք:

Ճ. Է. ՄԷՐԻԼ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՏՐ. Ք. ԵՈՒԻ

Անցեալ տարուան զարնան տեղի ունեցած Երուսաղէմի Միջազգային Միսիօնարական ժողովին մէջ է՛ն տպաւորիչ երեւոյթներէն մէկն էր տեսնել Ափրիկէէ և ծայրագոյն Արեւելքէ եկած յիսունի մօտ բնիկ առաջնորդներ, որոնք իրենց նկարագիրովն ու կարողութեամբը մեծապէս ազգեցին ժողովականներուն վրայ: Ասոնցմէ ոմանց մասին խօսիլ կը խորհիմ թէ կրնայ շահեկան ըլլալ «Նոր Աւետարեք» ի ընթերցողներուն:

Այս անգամ կ'ուզեմ խօսիլ մէկու մը մասին, որ արդէն մեզի ծանօթ եղած է Երուսաղէմէն դէպի Չինաստան ուղեւորութեան առթիւ իր Սուրիայէ անցնելու միջոցին:

ՏՐ. ԵՈՒԻ կը կոչուի այս դէմքը, որ ներկայիս Չինաստանի մէջ Քրիստոնէական շարժումին է՛ն գործօն և է՛ն կարող առաջնորդներէն մէկն է: Շանհայի Ս. Յովհաննէս Համալսարանին մէկ ուսումնաւարտն է ան, և 1910 ին, ստացած է իր Մագիստրոս Արուեստից տիտղոսը Հարվըտ Համալսարանէն: Չինաստան վերադարձին մի քանի տարի ուսուցչութեամբ կ'ըրազի, առեւ մը հանրապետութեան Փոխ Նախագահին քովը կը ծառայէ իբր անոր անձնական քարտուղարը: Փէքինի «Օրաթերթ» ին կ'աշխատակցի նաև իբր անոր խմբագիրներէն մէկը: Ետքը ան Չինաստանի Ազգ. Ե. Ք. Ընկ. թեան դասախօսական բաժնին զործադիր քարտուղարը կ'ըլ-

լայ, և շատ ժամանակ կուտայ բոլոր Չինաստանի մէջ դասախօսութիւններ տալով կրթական նիւթերու շուրջ: 1914 ին Չինաստանի առեւտրական ընկերութեան կողմանէ Ամերիկա ղրկուած վաճառականական մարմնի մը մէկ անգամը և թարգմանը կ'ըլլայ: 1916 էն իվիւր կը վարէ Ե. Ք. Ընկերակցութեան Ազգային կօմիտէին ընդհանուր քարտուղարի պաշտօնը: 1921 ին Ուաշինկթընի Չինագեղջման խորհրդածոգովին կը մասնակցի իբր Չինաստանի պատուիրակ: Ներկայիս Չինական Ազգային Քրիստոնէական Միութեան Նախագահն է:

«Չինաստան իր իսկ թարգմանը» անուն գիրքին մէջ ՏՐ. ԵՈՒԻ ստորագրած է «Գործակցութիւն Արեւմուտքէն» խորագիրով գլուխը որմէ կ'ուզեմ մի քանի մէջըրեւմներ կատարել: Այս գիրքին ութը գլուխներուն մէջ Չինացի քրիստոնէայ առաջնորդներ կը ջանան պարզել Չինաստանի ներկայ վիճակը և միսիօնարական շարժումին՝ մեծցող Չինական Եկեղեցիին հետ յարաբերութիւնը,

«Հակառակ Չինաստանի մէջ հակաքրիստոնէական շարժումին յարձակումներուն, կարեւոր կը նկատենք մեր անկեղծ շնորհակալութիւնները յայտնել Արեւմտեան մեր բարեկամներուն, քանզի բոլոր ազգերը Աստուծոյ փարախին մէջ հաւաքելու համար իրենց ունեցած աստուածային նպատակի տեսլիքին միջոցաւ, այս նպատակը իրագործելու համար իրենց եռանդին և մշտական զոհաբերական նուէրներուն շնորհիւ քրիստոնէութեան ծաւալումը կարելի եղած է Չինաստանի մէջ:» Թէպէտ յեղափոխական շարժումին պատճառաւ միսիօնարական եկեղեցական կալուածներ և ինչքեր զրաւուած են կամ աւերուած, «չի՞նք տեսներ որ աշխարհածաւալ քրիստոնէական շարժումը իրապէս խաչի ստուերին տակ ծագում առած է: Ապահովապէս Աստուծո՛յ կողմանէ որոշուած է ներկայ ժամանակը, որուն մի-

շոցին քրիստոնէական շարժումը դէպի առաջ հաստատ քայլ մը պիտի առնէ Չինաստանի մէջ:»

Տր. Եուի երեք նպատակներ կը յիշէ, որոնք կը յատկանշեն միախօնարական գործը Չինաստանի մէջ: 1) Չինական ժողովուրդին Աւետարանը տալ այնպէս ինչպէս որ ճանչցուած էր Արեւմուտքի մէջ իր դաւանանքներովը, սովորութիւններովը, ձգտումներովը և արտայայտումներովը: 2) Քրիստոնէական կազմակերպութիւններ և հաստատութիւններ կազմել և զարգացնել: 3) Քրիստոնէական կեանքը ներկայացնել և ապրեցնել, Չինական գաղափարները և կրօնական փորձառութիւնը անով ձուլացնել և իրարու ձուլել, մինչև որ ան ժողովուրդին կեանքին կենսական մէկ մասը կազմէ: Անոր կարծիքին համեմատ քրիստոնէութիւնը իր երկրորդ, այսինքն կազմակերպուած հաստատութիւններու շրջանին մէջ կը գտնուի, և կը յայտնէ թէ երրորդ շրջանը ալ սկսած պէտք է նկատուի:

«Քրիստոնէական փրօփականտի հիմը ինչէ՞ կը բաղկանայ: Մենք չենք համաձայնիր թէ այս փրօփականտը իր բնոյթով հոգեւոր է և պէտք է այդպէս ըլլայ: Աշխարհի քրիստոնէական շարժումները կը զօրանա՞ն թէ կը տկարանան: Քրիստոնեայ անհատներ իրենց հոգեւոր կեանքը և իրարու հետ իրենց հոգեւոր ընկերակցութիւնը աւելի՞ թէ պակաս կը շեշտեն: Մենք պէտք է թողունք որ Աստուած զրաւէ մեր սիրտերն ու հոգիները և իշխէ հոն բացարձակօրէն: Աստուած պէտք է մեր մէջը ըլլայ և մենք՝ Անոր մէջ: Քրիստոնեաներու և քրիստոնէական շարժումներու Աստուծոյ հետ և իրարու հետ այս հոգեւոր ձուլումը անդիմադրելի ոյժ մը պիտի ըլլայ որ պիտի կարողանայ աշխարհը հոգեւորականացնել»:

«Չինաստանի մէջ քրիստոնէական

փրօփականտայի կատարած կարեւորագոյն գործերէն մէկն է անշուշտ Չինացի զօրաւոր քրիստոնեայ առաջնորդներու պատրաստութեան լաւ սկզբնաւորութիւնը: Մենք շնորհակալ ենք այս պատրաստուած առաջնորդներուն համար, բայց տակաւին պէտք եղած չափով չունինք: պատասխանատու գիրքերու համար միշտ Չինացի քրիստոնեայ առաջնորդներ փնտռած և այս կերպով անկեղծօրէն փափաքած ենք թէ ներկայ պահանջին համար անոնցմէ շատեր պատրաստուած ըլլային»:

Տր. Եուի ջերմօրէն կը պաշտպանէ Չինաստանի մէկ Միացեալ Քրիստոնէական Եկեղեցւոյ մէջ գործակցութեան գաղափարը, խոստովելու համար այն յարանուանական դժուարութիւններէն որոնք Արեւմուտքի մէջ այնչափ մեծ տաղնապի պատճառ եղած են:

«Եզրակացնելով մեր խօսքը,» կ'ըսէ ան, «մենք լիովին կ'ըմբռնենք թէ որչափ կնճռոտ և բարդ հարցեր կը յարուցանէ գործակցութեան իրականացումը: Այս մեծ գործակցային քրիստոնէական ձեռնարկին նպատակին և քաղաքականութեան մասին մեր յայտարարութեամբը այս դժուարութիւններուն ակնարկելու համարձակեցանք, որ զանոնք թէ չինարեւակ թէ արտասահմանի առաջնորդներու անմիջական ուղղութեանց յանձնենք: Պէտք է կանուխէն ուսումնասիրել ապագայ գործակցութիւնը, և պէտք է կիրարկուի ան հոգեւոր բարձր մակարդակի վրայ: Ինչ հիանալի ընկերակցութիւն մըն է Աստուծոյ հետ գործակցութիւնը Չինաստանի եւ աշխարհի համար Անոր ծրագիրը իրագործելու մէջ»:

Է. ՓԱՐԹՐԻՃ

ՅԻՍՈՒՍ ՄԵՐ ԲԱՐԵԿԱՄԸ

Ձերմ բարեկամն է Յիսուս մեր հոգւոյն,
 Ձոր կը սիրէ միշտ սիրով գերազոյն:
 Ու պատրաստ է մեզ լսել անպայման,
 Մեր աղաչանքին ալ տալ պատասխան:
 Մեր տկարութիւն Ան գիտէ բոլոր,
 Մեր անկումներուն ծանօթ ամէն օր:
 Թէեւ պահանջկոտ ու խիստ է, իրա՛ւ,
 Բայց ճոխ է վանձը, սէրն անհո՛ւն ան-
 [բա՛ւ:

Ձերմ բարեկամ է Յիսուս մեր հոգւոյն,
 Ձոր կը սիրէ միշտ սիրով գերազոյն:
 Հասկնալ պատրաստ է մեզ անպայման
 Երբ ցաւեր, հոգեր մեր շուրջ կը տե-
 [ղան:

Վստահի՛նք Անոր բոլոր մեր վախեր,
 Ընծայե՛նք Անոր համակ սիրտը մեր:
 Իր խօսքերը սուրբ կուտան մեզ իսկոյն
 Իսկական հաճոյք ու երանութիւն:

Ձերմ բարեկամն է Յիսուս մեր հոգւոյն,
 Ձոր կը սիրէ միշտ սիրով գերազոյն:
 Հաճոյքով մեզի վերն կ'ապասէ ինք,
 Ու կ'ուզէ որ մենք ալ իր քով հասնինք:
 Հեռելինք ուրեմն այն նեղ ճամբէն
 [մենք,

Ու օգնութիւնը իր վրայ հաշուենք:
 Իր հետն յաւիտեան ապրելու՝ իսկոյն
 Պիտի ունենանք մեծ ուրախութիւն:

Թրգմ. Վ. ՊէյեԱն
 Ժընևի

ՅՐԱՆՔ ԹՈՎՄԱ

ԻԿԱԿԱՆ ՍԵՌԸ ԵՒ ԱՆՈՐ ԴԵՐԸ
 (Շար. նախորդ թիւէն)

Հայ կեանքն ալ բարեբաղդաբար,
 զուրկ չէր թանկարժէք օրիորդներէ և
 կիներէ, որոնք հոս հոն սփռուած ոսկե-
 փալ լոյսերու պէս մեր հին օրերը լու-
 սաւորած են: «Ձեռք կրնար մոռնալ
 Թէ Բրիտտոնէութեան արշալոյսը Հա-
 յաստանի հողը Սանգուխտներու արիւն-
 ներովը ներկուեցաւ. և անոր հիմը
 Վաղարշապատի մէջ Հռիփսիմեաններու

արիւններուն մէջ ողողուեցաւ: Երբ ան-
 գութ Տրդատ Բրիտտոնեաներու մահ
 կ'սպառնար և չլսուած հալածանքներով
 սարսափ կ'ազդէր, անոր քոյրը Խորո-
 վիզուխո Խորվիրապը բռնտարկուած
 Հուսաւորիչին հաց ու ջուր տանելով եղ-
 րօրը ապաշխարութեան պատճառ եղաւ:

Մանտաւագ հինգերորդ դարու մէջ
 հայ կիներու հաւատքն ու հաստատա-
 մտութիւնը իրենց կատարելութեամբ
 փայլեցան: Ղաւար Փարպեցի ահա-
 նատես վկայ ըլլալով կը պատմէ թէ
 Վարդանի զուգին մէջ կիներ սակա-
 ւածքիւ չէին. որոնք եկեղեցին ու հայ-
 րենիքը պաշտպանելու փափաքով կը-
 նոջական անկարողութիւնները մէկդի
 դրած այր մարդերու քաջութեամբ պա-
 տերազմեցան: Անոնք մեծ տառապան-
 քի դիմանալու համար ծնրադիր աղօթք-
 ներ մատուցանելով սաղմոսներ կ'եր-
 գէին. և անոնց ամենամեծ մխիթա-
 րութիւնը Աւետարանն էր: Հաւատքի
 ջերմ շունչովը լեցուած այս դարու մէջ
 Մամիկոնեաններու պսակը եղող Բաջն
 Վարդանի (որու յիշատակը այսօր կը
 տօնենք) մեծ եղբօրը կինը Տիկ. Զուրկ
 դառն հալածանքի ժամանակ բանտերու
 անկիւնը իր գաւազները Բրիտտոնէա-
 կան անխախտ սկզբունքներով կրթելով
 Վահանի պէս եղական քաջ մը նուիրեց
 ազգին: Հայ Բրիտտոնեայ կինը ժա-
 մանակի և պարագաներու թոյլատրա-
 ծին չափ գլխութիւն և գեղարուեստ
 ալ ձեռք բերած, երաժշտական տա-
 ղանդներ և դասատուներ ալ յառաջ
 բերած է: Ստեփաննոս Սիսեցիի ժա-
 մանակ հայ կինը վարագոյրի ետեւ նըս-
 տիւով Ուխտի Մանկանց եկեղեցւոյ ան-
 դամներուն ձայնավարժութեան դաս
 կուտար: Մեր հին զրազէտներու գոր-
 ծերու մէջ հայ կինն ալ բաժին մ'ունե-
 ցած է: Նոյնիսկ ամէնէն հին ձեռա-
 գրով պահուած հայերէն Աւետարանը
 հայ տիկնոջ մը, Միլքէ թագուհիին

ձեռագիրն է»։ Հայ կիրնը այսօր տը-
գէտ եւ սըկար կրնայ սեպուիլ. նկա-
րագիրը տարբեր ունակութիւններով
բժաւորուած կրնայ ըլլալ։ Բայց անու-
րանալի է որ տակաւին անոր երակնե-
րուն մէջ նոյն արիւնը կը շրջի։ Նա
միեւնոյն Աստուածապաշտ, համեստ,
ու պարկեշտ տարրը պէտք է ըլլայ։
Արդի օրիորդն ու տիկինը նոյն կարողու-
թեամբ ու ձիրքերով օժտուած է։ Իբր
ներկայ դարուս օրինակները կրնանք
յիշել Տիկ. Զ. Հ. Ասատուրը, Տիկ.
Սրբուհի Տիւսարը եւ Օր. Տայեանը, ու-
րոնք իրենց ծառայութեամբը մեծ դեր
մը կը կատարեն։ Կեանքի մէջ կիներու
լեցնելիք տեղը այնքան կարեւոր է որ
եթէ անոնք թերանան իրենց պարտա-
կանութիւնները կատարելու մէջ կեանք-
ը ամբողջութեամբ ձախողութիւն մը
կը դառնայ։ Անոնց ձեռքերէն կը հո-
սին մարդկութեան կեանքի ազդեւորնե-
րը։ Թագաւորէ մը աւելի անոնք են
փառքի ալը։ Անոնց տուած հրահանգ-
ներն են որ ընկերութեան ոյժը պիտի
որոշեն։ Մաքուր, անմեղ եւ ճշմարիտ
կեանքով անոնք պիտի ստիպեն որ
մարդը գոնէ իր միջավայրին մէջ պաշտէ
մաքութիւնը, անմեղութիւնը եւ ճշ-
մարտութիւնը։ Անոնք կամ պիտի նը-
ւաստացնեն շուրջինները կամ պիտի
վսեմացնեն զանոնք։ «Կնկան արդի
պարագաները քաղաքակրթեալ ընկե-
րութեան մը փորձաքարն է», կըսեն։
Նա յիշուի զօրութեան սիւնն է։

Սաչափը բաւական սեպենք իզական
սեռի շնորհուած բարեմասնութիւննե-
րու նկատմամբ։ Մենք կարգացած ենք
այն պատմութիւնը որ մեզի յայտնած է
թէ շատ խնամքով տաշուած ու յղկը-
ուած ադամանդ մը՝ միայն թագաւորա-
կան թագի մը վրայ կը զետեղուի։ Եւ
սերտեցինք թէ կիւնն ալ շատ խնամքով
պատրաստուած ու արժանիքներով օժ-
տուած էակ մըն է։ Բայց ո՞ւր է կնոջ

ընդունակութեանց իրազորութեան համար
յարմար վայրը։ Ո՞րն է անոր ասպա-
րէզը։ Նախախնամութիւնը զայն շա-
տոնց պատրաստած է։ Ընտանիք կը
կոչուի այն տեղը որ աշխարհի զրախտն
է։ Անոր հիմնադիրը Արարիչն է,
ծագումը՝ նախապատմական։ Հա-
մաշխարհային հաստատութիւն մ'է ան-
կառն իր կրկնա կազմակերպութիւնն
է ան, զոր մեր նախահայրերը օճախ
կանուանէին։ Եւ «սրբավայր մ'էր նա
անոնց համար, սիրոյ մատուռ մը, զո-
հաբերութեան խորան մը, որուն քա-
հանայտպետը ծնողքն էր, ժողովուրդը՝
զաւակները, բուրվաւը՝ սիրտը, խուն-
կը՝ սէրը։» Ընտանիքի բուն նշանա-
կութեան մասին մէկը սապէս կը գրէ.
«Ան ազգային կեանքի խանձարուրն է
ու տաքուկ բոյնը՝ ուրկէ կը ծլին ազ-
գեր, ձեւակերպելով իրենց նկարագիրը.
ուստի ցեղային կեանքի կեդրոնն է ու
սիրտը։ Ընտանիքը ազգի մը կեանքի
նկարագրին ճարտարապետն է», որ
յառաջ կը բերէ իմաստուն գլուխներ,
հրաշակերտ գրիչներ, զմայլելի հան-
ձարներ եւ կեանք սփռող գիւցազներ։
Ընտանիքը թագաւորութիւն մ'է, որուն
թագը այրին գլուխն է, իսկ իշխանու-
թեան զաւազանը կնկան ձեռքն է։ Ա-
հա իզական սեռը իր բոլոր պերճանքով
այս միջավայրին կեդրոնը զետեղուած
է. եւ Միլիթըն իրաւամբ ըսած է. «Այս-
քան բարձր տեղ մը զրուածը փուճ
պատճառ մը չի կրնար ունենալ։» Ի-
մաստուն ձեռքը իզական սեռը քոյր
եւ մայր տիտղոսով պսակեց ու իր զոր-
ծատեղը զրկեց որ իր ծառայութեամբը
ընկերութեան իրական դարդը ըլլայ.
Նա բեռ մը ունի եւ եթէ արժէքը ճանչ-
նայ զանձի մը պետի փոխուի։

(Շար.) Ա. Ն. Շիրիֆձեմն

ԵՕՂՈՒՆ-ՕԼՈՒԳԻ
ՀԱՅ ԱՒԵՏ. ԵԿԵՂԵՑԻ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Եօղուն-Օլուգ՝ մէկն է Մուսա Լերան հօթը հայ գիւղերէն, որոնք Սուրիոյ հիւս. կողմը Սուէյտիա ըստած գաւառին մէկ մասը կը կազմեն: Եօղուն-Օլուգ Անտիօք քաղաքին Արեւմտեան կողմըն է և անկէ անասունի ճամբորդութեամբ 4-5 ժամ հեռու է: Մուսա Լեւը և Սուէտիոյ գաւառը ընդհանուր պատմութեան նշանաւոր վայրերէն եղած են: Մեծն Աղէքսանդրին ամէնէն յանդուգն զօրավարին, Սելեւկոսի, կառուցած մեծ մայրաքաղաքը այս Սուէտիոյ գաւառին մէջն է և Եօղուն Օլուգէ երկու ժամ հեռու կը գտնուի:

Պօղոս, Բառնաբաս և Շիրա, դէպի Սուրիա, Դոնիա, Անտիօք, և Կիլիկիա կատարած իրենց առաքելական ճամբորդութիւններու միջոցին անդատճառ այս յիշեալ վայրերէն անցան:

Աւետարանական չարժուիքը Եօղուն Օլուգի մէջ 1868 ին սկսեց: Աւետարանականները երեք չորս տարի իրենց հիմակուան եկեղեցական շէնքին զիմայը գտնուող տան մէջ կրօնական պաշտամունքներ կատարած են, հակառակ իրենց հայրենակիցներուն հալածանքին, և 1872 ին հողաշէն եկեղեցի մը և երկրատուն մը շինելու յաջողած են: Եկեղեցիի և երկրատան շինութեան մէջ՝ այն ժամանակ Քէսապ բնակող Ամերիկեան միսիօնար մը, Էտէմզ, մեծ եռանդ ջանք և զոհողութիւն ցոյց տուած է, նոյնիսկ ինք անձամբ գործաւորներու հետ աշխատած է: Ընդհանուր պատերազմի ժամանակ եկեղեցական բոլոր գրութիւնները կորսուած ըլլալով Եօղուն-Օլուգի եկեղեցիին պատմութիւնը կարելի չէ ճշգրտէն և կատարեալ կերպով գրել: Հետեւեալ անձերը իբրեւ հոգեւոր պաշտօնեայք ծառայած են, որոնց ժամանա-

կազմական կարգը կարելի չեղաւ որոշել:

1. Տիար Յովսէփ Գայրզճեան (Պիթիասցի)
 2. Տիար Մովսէս Ֆիլեան (Պիթիասցի) 3-4 տարի.
 3. Վեր. Պօղոս Խալֆէեան (Այնթապցի) 4-5 տարի.
 4. Վեր. Մանուկ Նիկողոսեան 2 անգամ 3-7 տարիի չափ.
 5. Վեր. Ստեփան Եարփուզեան 3-4 տարի.
 6. Տիար Յակոբ Բումեան 1 տարի.
 7. Տիար Յովհաննէս Քէշիշեան 2 տարի.
 8. Վեր. Յրթն. Պօյնուէօղունեան.
 9. Տիար Սամուէլ Կիրակոսեան.
 10. Տիար Գէորգ Մընչերեան.
 11. Վեր. Ստեփան Մահչիկեան.
 12. Վեր. Կարապետ Սթամպօլլուեան.
 13. Տիար Ստեփան Հայտօսթեան.
 14. Տիար Համբարձում Էլմաճեան.
 15. Պատ. Սամուէլ Ինկիլիզեան
Համաշխարհային պատերազմէն վերջ.
 16. Վեր. Տիգրան Անդրէասեան (Եօղուն-Օլուգցի) 2 տարի.
 17. Տիար Նազարէթ Տարազճեան 6 ամիս.
 18. Վեր. Ասատուր Պէրպէրեան 3 ամիս.
 19. Տիար Պօղոս Թիւթիւնճեան 3 տարի.
- Ապա Եօղուն-Օլուգի եկեղեցին առանց պաշտօնեայի մնացած է երեք տարիի չափ, որուն միջոցին երբեմն երբեմըն Հալէպի Շրջանային ժողովը առժամանակեայ քարոզիչներ դրած է, և ուէ հոգեւոր պաշտօնեայի մը բացակայութեան ատեն տեղացի խաչեր Աղա Հաճեան ամէն կիրակի եկեղեցին բանալով եկեղեցական պաշտամունք կատարած է: Նոյ. 15. 1928 է մինչեւ Յունիս, ստորագրեալս ծառայած է Եօղուն-Օլուգի մէջ իբր քարոզիչ:

Տեղահանութեան և արտագաղթի պատճառաւ այս Աւետարանական եկեղեցին չատ տկարացած է: Այժմ բողոքական հասարակութեան թիւն է 108,

եկեղեցիի անդամներուն թիւը՝ 35, զըպ-
րոց յաճախող աշակերտաց թիւն է 20:

Եօդուն-Օլուզի բողոքական ժողո-
վուրդը բաւական ժամանակ այս հողէ և
ծանր քարերէ շինուած եկեղեցիի մէջ
իրենց պաշտամունքները մատուցանելն
վերջը այս հինցած եկեղեցիի շէնքը
քանդելով ձեռնարկեր են քարաշէն վար-
ժարան մը և վրան հոյակապ եկեղեցի մը
կառուցանելու: Բայց հապիւ թէ վարի
յարկը, դպրոցի շէնքերը, կը լմնցնեն
Մեծ պատերազմը վրան կը հասնի և եկե-
ղեցւոյ շինութեան չսկսելով իրենց հայ-
րենի օճախը կը թողուն և կ'երթան:
Քարերը կը կենան կուտակուած Կեղեց-
ւոյ շրջափակին մէջ:

Եօդուն-Օլուզի 250 ընտանիքներու
ստուար մեծամասնութիւնը սանտրա-
զործութեամբ և շերամաբուծութեամբ
կ'զբաղի: ասոնք ալ ժողովրդի քիչ հա-
սոյթ կ'ապահովեն: Եթէ գորգի, մա-
նուսայի և կօշիկի գործարաններ բաց-
ուին հոս կամ մօտակայ հայ գիւղերու
մէջ թէ ժողովրդին տնտեսական վիճակը
կը բարւոքի և թէ երիտասարդաց ար-
տագաղթը կ'արգիլուի:

Կիրակի առաւօտները հայերէն և կի-
րակի իրիկունները թրքերէն քարոզներ
կը տրուին, հինգշաբթի գիշերները աղօ-
թածողով կը կատարուի և ուրբաթ գի-
շերները երիտասարդաց բարոյական ու
Քրիստոնէական խրատները կը տրուին
և հայերէն հոգեւոր երգեր կ'երգուին:
Հայ լուսաւորչական համայնքին հետ
մեր յարաբերութիւնները սիրալիւ են:
Ծնունդի և Զատիկի եւ նշանաւոր տօնե-
րու առթիւ Բողոքականաց քարոզիչը
Հայ Առաք. Եկեղեցին կը հրաւիրուի
քարոզելու համար:

Կ. Յ. ԳՈՒՆՏԱՎՃԵԱՆ

ՍԱՒԱՌՆԱԿԻ ԳՈՐԾԱՅՈՒԹԻՒՆԸ

Քսաներորդ դարուն սկիզբը երկու
երիտասարդ մեքենագէտներ, այսօր աշ-
խարհիս ծանօթ Ամերիկացի Բայթ Կը-
բայրները, իրենց պզտիկ խանութին մէջ
մեքենայ մը կը շինէին, մինչ իրենց
հայրը, յայտնի եկեղեցական մը, ներս
կը մտնէ ու կը հարցնէ թէ ի՞նչ է իրենց
շինածը. և երբ կը հասկնայ որ մեքե-
նայ մըն է ան թռչելու համար, պարզա-
պէս յիմար կը կոչէ իր ապագայ մեծ զա-
ւակները: Այս երկու խեղդերէն մէկը
մեռած է իսկ միւսը տակաւին կ'ապրի
և այսօր բոլոր աշխարհիս վրայ ապրող
12 մեծագոյն մարդերէն մէկը կը նկատ-
ուի:

Սաւառնակը քառորդ դարու պատ-
մութիւն մ'ունի միայն. բայց այսքան
կարճ շրջանի մը մէջ մեծ յառաջդիմու-
թիւն և կատարելագործում մը ունեցած
է, ապահովելով իրեն համար եղական
գիրք մը այս մեքենայի դարուս մէջ:
Սաւառնակը իր ներկայ ծառայութիւն-
ներովը և ապագայ կարելիութիւններու-
վը կոչուած է յեղաշրջող ազդակ մը ըլ-
լալ մարդկային կեանքին մէջ:

Սաւառնակը պատերազմի միջոցին
զարգացաւ և իբր ռազմական սարսափելի
միջոց մը յայտնուեցաւ, այնպէս որ ներ-
կայիս բոլոր պետութիւնները տենդոտ
աշխատանքի լծուած են օգային զօրա-
ւոր տորմիզներ ունենալու համար, որուն
մէջ Ֆրանսա առաջին գիրքը շահած է
բոլոր աշխարհիս վրայ:

Գիտական կարգ մը խուլարկութիւն-
ներու համար ամենայարմար գործիք մը
հանդիսացած է սաւառնակը: Գիտուն-
ները՝ օդի հոսանքները, անո՞ր բարձրու-
թիւնը և փոփոխութիւնները, նորա-
զիւտ ֆօլիօֆ ճառագայթները և այլն ու-
սումնասիրելու համար մեծապէս օգտը-
ուած են այս թռչող մեքենայէն:

Գերման սաւառնորդները քաղաք-

ներու քարտէսները կը լուսանկարեն, բարձրիւնն անոնց տգեղ երեւոյթները կը տեսնեն և այս կերպով մեծ ծառայութիւն կը մատուցանեն քաղաքացիութեան-քաղաքները աւել կանոնաւոր, գեղեցիկ և համաչափօրէն բարեկարգելու համար:

Աշխարհիս քարտէսը տակաւին կատարեալ չէ իր բոլոր մանրամասնութիւններուն մէջ. սաւառնակը մեծապէս օգտակար եղած է անճշգրիտ կէտերը սրբազրելու և անձանօթ վայրերը նշանակելու մէջ:

Զբօսասէր մարդիկ երբէք ետ մնացած չեն սաւառնակը գործածելու մէջ: Սաւառնակի մէջ պտակի արարողութիւն կատարել, մեղրալուսնի պահ մը վայելել, ծննդաբերութիւն ունենալ, պարզ սքօսանքի պտոյտներ կատարել, եղած դէպքեր են:

Ակնարդոյտները կը յայտնեն թէ կարգ մը աչքի ցաւերէ տառապող մարդիկ պիտի լուծուին երկնց ցաւերէն երբ սաւառնակով օդը իլլեն և բարձրիւնն զիտեն աշխարհս:

Սաւառնակը ներկայիս կը գործածուի նաև երկնագրութեան մէջ, այսինքն երկինքի վրայ գիր գրելու մէջ: Այս կը գործածուի ծանուցումներու, ցոյցերու և մասնաւոր հիւրերու բարի գալուստ մաղթելու համար: Երկնագիր սաւառնակը 72 հոգա քիմիական նիւթեր բարձած, ընդհանրապէս մինչեւ 8000 և երբեմն մինչև 10,000 ոտք կը բարձրանայ օդին մէջ, և իր ետեւի կողմը խողովակի մը մէջէն 30-40 ոտք թանձրութեամբ մուխ մը դուրս կուտայ: Ահա այս արուեստական քիմիական ամպը գիրերու վերածուած կը շարունակ օդին մէջ, ուր կարճ ժամանակուան համար, հինգ վայրկեանէն մինչև կէս ժամ, կրնայ առանց ցրուելու մնալ, պարագայ մը որ օդի հոսանքէն կախում ունի: 32 գիրերէ բաղկացեալ նախադասութիւն մը գրելու հա-

մար սաւառնակը 25 մղոն պիտի ճամբորդէ, գիրեր կան որոնք մէկ մղոն երկայնութիւն կ'ունենան, հասարակ կէտ մը թաղամասի մը ընդարձակութիւնը ունի:

Սաւառնակի և օդանաւերու մեծագոյն ծառայութիւնը, սակայն, կ'ակնկալուի փոխադրութեան մէջ: Այս մարդին մէջ առանց ծառայութիւնը տակաւին հետի է ներկայ կեանքը յեղաշրջելէ: Շոգեկառքը և մանաւանդ օթօները իբրեւ փոխադրութեան միջոց երբ սկսան գործածուիլ իրենց ներկայ չափով՝ մեծապէս յեղաշրջելին կեանքը, հեռաւորութիւնները կարճեցնելով: Սաւառնակին տակաւին կը պակսի այն կատարելագործումը, որուն շնորհիւ ան պիտի կրնայ մեծագոյն չափով գործածութեան մէջ դրուիլ իբր ապահով միջոց մը փոխադրութեան: Եթէ գիտունները յաջողին սաւառնակներու կառաչար մը կամ մի քանի հարիւր հոգինոց ապահով օդանաւեր շինելու մէջ, ինչպէս որ կը խորհին և կը փորձեն ներկայիս, այն ատեն օթօյի դարին պիտի յաջորդէ օդանաւի դարը փոխադրութեան մարդին մէջ:

Սաւառնակը ներկայիս գործածութեան մէջ է նաև իբր միջոց մը առողջապահական պայմաններ յառաջ բերելու մէջ: Ճահճատենդը հինէն իվեր մեծագոյն վնասը հատուցած է մարդկութեան, որ անոր յաղթելու և վայն բնաջիջ ընելու համար լուրջ և յարատեւ պայքարի մէջ է եղած: Գիտունները ահա կը կարծեն մահացու հարուած մը առած ըլլալ անոր, բնաջնջելով բոլոր մօեղները, որոնք փոխանցումի միակ միջոցը կը կազմեն այս հիւանդութեան: Ճահճները և ուրիշ մաշարիւայով վարակուած գետիները կատարելապէս մաքրելու համար սաւառնակներու միջոցաւ թոյն կը թափեն յիշեալ տեղերուն վրայ, այդ պատիկ կենդանիները սպաննելու համար. այս փորձը յաջո-

դուժեամբ պսակուած է :

Միջատաբաններու վերջին մէկ համաժողովին մէջ կարգ մը միջատներ մաւախ, մուն, տեսակ տեսակ թիթեռնիկներ, բոյսի որդեր, ևայլն, ուշադրութեան առարկայ եղած են : Կարգ մը յուռետես գիտուններ յայտարարած են թէ մարդկութեան մեծագոյն թշնամին այս միջատներն են, որոնց յաղթելու մէջ մարդը անզօր գտնուած է, հակառակ իր ամէն տեսակ ջանքերուն : Տակաւին շատ թարմ է Սուրիացիներու յիշողութեան մէջ այս պզտիկ անասուններուն հասցուցած անչափելի վնասները : Գիտունները այս անպարտելի թշնամիներուն դէմ իրենց պայքարին մէջ կ'ուզեն օգտագործել սաւառնակը, որուն միջոցաւ թունաւորելով այս անասուններուն բոյները կը խորհին զանոնք բնաջինջ ընել :

Ահա թուող մեքենային մի քանի ծառայութիւնները և կարելիութիւնները որոնք բաւական մեղի գաղափար մը տաւնոր կարեւորութեան մասին : Բայց հոս պէտք է յիշել նաև կէտ մը որ ուշադրութեան արժանի է : Այս անմահ գործիքը որ պէսզի կարենայ օրհնութիւն մը ըլլալ մարդկութեան պէտք է ան գործածուի բարձր բարոյականի տէրանհատներու կողմանէ : Նոյն գործիքը սճրագործի մը, խմողի մը ձեռքին մէջ մեծագոյն պատուհասը պիտի ըլլայ աշխարհիս : «Եթէ բարոյական զարգացում մը նիւթական յառաջդիմութեան հետ զուգընթաց չ'երթար, կործանումը աւելի անուելի և ոճիւրդ աւելի սաստիկ պիտի ըլլայ : Նկարագրի զարգացումէն կախում ունի այն պարագան որ սաւառնակը բարեկեցութիւն թէ աղէտ պիտի պատճառէ աշխարհին» :

Տ. Ճ. ԽԸՐԼՈՐԵՍՆ

ՊԱՇՏԱՄՈՒՆԻ ԶԵԻՆԵՐԸ

Ամերիկեան ժողովական եկեղեցիի մը մէջ խումբ մը մարդիկ պաշտամունքի մասին մի քամի իրիկուններ ուսումնասիրութիւն ընելէ վերջ հետեւեալ եզրակացութեան կը յանգին :

«Պաշտամունքը շատ մը երեւոյթներ կրնայ ունենալ. բայց որչափ որ մենք կը հաւատանք, մեր եկեղեցիին մէջ սովորական երեք ձևեր կան : Առաջին՝ պաշտամունք մը կայ որ իրական կեանքէն փախչելու կը ծառայէ : Այս խումբին պատկանող մարդերը կեանքը աւելի բարձր մակարդակի հետ հաշտեցնելու համար կը խուսափին իրենց րաժինը ունենալէ : Նահանջելու սովորութիւնը կը կառավարէ այս անկեղծ մարդերը, և իրենց ծիսական լեզուն կը ցուցնէ թէ կանոնաւոր կեանքին՝ հաճոյքով մասնակցիլ շատ դժուար է իրենց համար : Պաշտամունքի երկրորդ մէկ տեսակը այն է որ միօրինակ և տափակ կեանքի մը համար իբր անակնկալ հիացում և հաճոյք կը ծառայէ : Այս տեսակ պաշտամունքը կազդուրիչ կրնայ կոչուիլ : Ասոր մասնակցողները անակնկալը գտնել կը փափաքին : Պաշտամունքը ասոնց կուտայ այնպիսի խանդ մը որ զիրենք կեանքի սովորական գործերէն վեր կը բարձրանայ : Այս տեսակ մարդիկ վիպական երգեր կ'ընտրեն, որոշ տեսակէ քարոզներէ հաճոյք կ'առնեն, և իրենց վիպապաշտ միտումին գոհացում տուող սահմանափակ գործունէութիւն կ'ունենան : Երրորդ տեսակ պաշտամունք մ'ալ կայ որ նշանազ սովորական է մեր ժողովուրդին մէջ : Այս ձեւը կեանքի ուղղութեան մասին գաղափար մը, իրական կեանքը ստեղծագործող ոյժին նպատակ մը և հաւասարակշռութիւն մը կը մատուցանէ : Այսպիսի պաշտամունքի մասնակցողները ազատօրէն գաղափարներու փոխանա-

կութեան մէջ կը մտնեն, և այնպէս կ'երևի թէ իրենց պաշտամունքը իրենց կուտայ կեանքը վարելու համար ոյժ և ուղղութիւն: Այս տեսակ մարդու պաշտամունքի ձեւը շատ գործնական և օգտակար է:

Ծ. Ո. Հ.

ԿԵԱՆՔԻ ՇՈՂԵՐ

ԴԻԻՑԱԶՆՈՒՀԻՆ

Քաղաքին, ստորին թաղամասին մէջ ծեր կին մը կը բնակէր, որուն մէկ սըրունքը, մէկ աչքը և մէկ ակռան միայն կրնային պէտք եղած կերպով ծառայել իրեն: Որդիներէն մէկը բանակին մէջ էր, մէկ երկրորդը ծովային զինուոր էր, իսկ երրորդը կոյր էր իծնէ: Դուստր մը ունէր ապաստանարանի մէջ, ուրիշ մը՝ ապաքինարանի մէջ, երրորդ մը՝ փողոցներու մէջ, իսկ չորրորդ մէկ սըրունքը կոտրած գուստըրը զաւակներովը միասին իր քովը կ'ապրէր, գինեմու աւտ սնէն զատուած ըլլալով:

Այս ծեր կինը մեծ հոգի մ'ունէր: Ան կը հոգար թէ իր կոյր տղան, թէ իր աղջիկը և անոր զաւակները, և թէ ապաքինարանի մէջ եղող աղջիկը և անոր ընտանիքը: Իր միակ հասնցիկը աղբիւրը կարի մեքենայ մըն էր, որով կար կը կարէր: Եւ այսուհանդերձ ան միշտ պզտիկ դրամ մը կ'ունենար ամէն կիրակի օրը եկեղեցիին գանձանակը և միսիօնարական սնտուկը դնելու համար:

Երբ Մեծ Պատերազմը սկսաւ, պահ մը առանց գործի մնաց այս կինը: Եկեղեցական հովիւի մը երէցկինը կը խորհի անոր գործ ճարելու: Այն ատենները զինուորներու համար գօտինեւու պահանջ մը կար: Երէցկինը պէտք եղած նիւթեղէնը ծախու կ'առնէ և այս ծեր կնոջ կը յանձնէ զանոնք, գօտի կարելու համար: Երբ կինը այս գործը կը լմնցնէ և գօտիները երէցկնոջ կը ղրկէ: Սա վերջինը հակառակ իր բոլոր ջանքե-

րուն անյաջող կ'ըլլայ այս գօտիներուն կարողչէքը վճարելու: Երէցկինը կ'ըստառնայ անգամ մ'ալ գործ չբերել իրեն, ծեր կինը դարձեալ անխախտ կը մնայ իր պնդումին մէջ: Գօտիներու եկրորդ մէկ ծրարը երբ բացուեցաւ երէցկինը տեսաւ որ որոշուած ձեռն տարբեր ըլլալով իւրաքանչիւրը երկուքական զըրպաններ ունէին, որոնք մէկ մէկ դրամի պզտիկ կտոր մը կը պարունակէին: Երէցկինը դարձեալ կը բողոքէ, որուն կը պատասխանէ ծեր կինը. «Կը խնդրեմ, տիկին, զանոնք հոն թողուցէք. թերևս ասոնցմէ մէկը զարնուող գնդակ մը ետ կը դարձնէ և երիտասարդի մը կեանքը կը փրկէ»:

Շատ չանցած ծեր կինը թոքային հիւանդութիւն մը ունեցաւ: Երէցկինը կ'այցելէ անոր, որուն մահը ա'լ մօտալուր էր: Ծնրագիր կ'աղօթէ հիւանդին համար և Աստուծոյ կը յանձնէ անոր հոգին: Աղօթքէն վերջ հիւանդը կ'ըսէ. «Ոհ, սիրելիս, շատ անհանգիստ եմ:» «Ի՞նչ ունիք, կրնա՞մ ձեզի օգնել», կը հարցնէ երէցկինը: «Ոչ, չեմ խորհիր թէ կրնաք. ես ձեզ յուսախաբ պիտի ընեմ տիկին, ինծի յանձնուած բոլոր գօտիները տակաւին չկրցայ լմնցնել»: Խեղճ ծեր կին մը որ իր մահէն քիչ առաջ ոչ թէ իր՝ այլ ուրիշներուն վրայ կը մտածէ: Սէրը հերոսի մը փոխած էր այս տկար արարածը:

ԲԱՆՏԻ ՄԷՋ

Ասկէ մի քանի տարիներ առաջ Եւրպայի մէջ քրիստոնեայ մարդ մը կը բանտարկուի, առանձ գիտնալու գողօն մը ծախու առած ըլլալուն համար: Իր խցիկին կից կը գտնուէր մահապարտ յայտնի ոճրագործ մը, որ որոշած էր մեռնելէն առաջ վերջին գոհ մըն ալ ունենալ, իրեն ներկայացող առաջին մարդը սպաննելով իր քովը գաղտնի պահած դանակով մը:

Քրիստոնեան իր քովը ունէր իր Նոր Կտակարանը, որմէ բարձրաձայն ընթերցումներ կ'ընէր ոճրագործին հայհոյանքները չլսելու համար: Ատեն մը վերջը Քրիստոնեան կը տեսնէ որ իր դրացին ա'լ լռած է: Ասկէ քաջալերուելով անոր հետ խօսակցելու եւ Յիսուսի մասին պատմելու կ'սկսի, որմէ զգալիօրէն կ'ազդուի ոճրագործը:

Ատեն մը անցնելէ վերջ քրիստոնեան կ'արձակուի, բայց իր Նոր Կտակարանը իր դրացիին կը նուիրէ: Քիչ վերջը մարդասպանը իրեն կը կանչէ բանտապահը եւ զանակը անոր յանձնելով կը պատմէ՝ թէ ինչ էր իր մտադրութիւնը, թէ հիմայ փոխած է իր միտքը եւ ապրելու լուսավոյն ճամբայ մը գտած է: Մարդասպանը ջերմհոանդ քրիստոնեայ մը դարձաւ որուն կեանքը այնչա'փ ազդեց բանտապահին վրայ որ արտօնեց զայն իր նախկին ոճիրի ընկերներուն գրել իր Նոր կեանքին մասին, խնդրելով անոնցմէ որ Յիսուսի հետեւին:

Իսնախ մէջ իսկ Աստուծոյ խօսքը անլուելի է. բանտի մէջ իսկ մէկը կըլնայ Քրիստոսի մասին վկայել:

ԴՐԱՄ ՓՈԽ ՏԱԼՈՒ ԿԵՐՊ ՄԸ

ՊԲ. Ֆրէնքլինի կարօտ մէկու մը զըրամ զրկած ատեն սա խօսքերը գրեց անոր. «Ձեզի պզտիկ գումար մը կը զրկեմ իբր նուէր. բայց միայն իբր փոխ կուտամ ձեզի: Երբ հայրենիք վերագառնաք զործ մը գտնելու պիտի յաջողիք եւ ձեր պարտքը վճարելու կարող պիտի ըլլաք: Այն պարտադային եթէ թշուառութեան մէջ տառապող պարկեշտ մարդու մը հանդիպիք, հաճեցէք այդ գումարը անոր փոխ տալու, յայտնելով անոր թէ ան ալ իր կարգին իր պարտքը ձեզի պէս վճարելու յանձն առնէ, եթէ վճարելու կարող ըլլայ եւ կարօտի մը հանդիպի: Կը յուսամ այս պզտիկ գումարը այս կերպով շատերուն օգտակար պիտի կրնայ ըլլալ:»

ՃԱՐՈՆԻ ՈՒՍԱՆՈՂԻՆ ԴՍՐՁԸ

Ճարոնի մէջ նրկու գոլէճական ուսանողներ, մէկը Ճարոնցի իսկ միւսը Ամերիկացի, նախագահին կը դիմեն եւ կը զանգատին իրենց սենեակներուն ցրտութեան համար: Նախագահը, բարի եպիսկոպոս մը, կը պատասխանէ այսպէս. «Կը ցաւիմ որ խնամակալ մարմինը չի կրնար զբամխնայել ձեր սենեակները նորոգելու:» Այդ քրիստոնեայ ուսանողին դառնալով կ'ըսէ. «Ձեզի գալով խնդիրը չուտով կրնանք կարգադրել: Դուք երիտասարդ էք, ապագայ կեանք ունիք եւ ձեր առողջութիւնը պէտք է ապահովութեան տակ առնուի: Ես ծեր եմ, գործս գրեթէ կատարած եմ. իմ սենեակս զէպի հարաւ կը նայի, տաք եւ լուսաւոր է: Դուք իմ սենեակս կ'առնէք եւ ես ալ ձերը:» Երիտասարդը կը բողբօքէ, բայց ի զուր. ոչ մէկ բան կրնար եպիսկոպոսը համոզել իր մտադրութենէն ետ կենալու համար:

Ճարոնցի ուսանողը այնչա'փ ազդուեցաւ եպիսկոպոսին այս անձնութեանն եւ զայն ընելով ցուցուցած ուրախութենէն որ որոշեց իր կեանքը տալ անոր Տէրօջ, Յիսուսի Քրիստոսի:

ՏՂԱՆ՝ ԽԵՂԴՈՒԵԼՈՒ ՎՏԱՆԿԻՆ ՄԷՋ

Ջուրը ինկած տղայ մը յուսահատօրէն կը պայքարէր ջուրերուն դէմ չխեղդուելու համար: Մայրը կզերքը կայնած սարսափելի տաղանակի մէջ կը դիտէր իր զաւակը, որուն ազատուելուն համար ի զուր կրկին ու կրկին պաղատած էր իր քովը կայնած ուժեղ կազմով բայց անտարբեր երեւոյթով մարդու մը: Կամաց կամաց տղան ալ յոգնած ըլլալով իր յուսահատական ճիւղերը զադրեցուց: Մարդը անմիջապէս ջուրը ցտակեց եւ տղան ապահով վիճակի մէջ իր մօրը յանձնեց: «Բայց ինչո՞ւ տեղի առաջ չ'ազատեցիր զաւակս,» պտռաց

ՊԱՋԱՐ—ԵՐԵՎԱՆԻ ՄԸ

երախտագէտ մայրը: «Տիկին,» ըսաւ մարդը, «ես չէի կրնար զայն ազատել քանի ան յուսահատական ճիգերու մէջ էր. ան երկուքնիս ալ զէպի մահ պիտի տաջնորդէր: Բայց երբ ան ուժասպառ գաղթեցուց իր ճիգերը, ազատել կարելի եղաւ:» Ինքզինքնիս փրկելու աշխատիլ պարզապէս Բրիտանիոյ մեզ փրկելէ աւելի է: Մենք պէտք է գաղթինք և Տէրոջ առիթ տանք, ահա այն ատեն մեզ պիտի բարձրացնէ Ան՝ մեզքի վրայ յաղթանակը ապահովելով:

ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ԱՍՈՐԻ ԱԻԵՏ. ԵԿԵՂԵՑԻՆ

Ուրփայի Ասորիներու Աւետ. Եկեղեցին Հալէպ հաստատուելէն վերջ իր գաղթացման երկրորդ շրջանը մտած է: Ժողովուրդին մէջ եկեղեցական գիտակցութիւնը զօրացած է և իբր 30 ընտանիք ժողովուրդ մը նուիրուած է եկեղեցին յառաջացնելու գործին: Այս տարի առաջին անգամ ըլլալով ժողովուրդը եկեղեցական տուրք գրուած է: Եկեղեցին յաճախողներու թիւը զգալիօրէն աւելցած է, մանաւանդ վերջին երկու տմիսէ ի վեր, ունկնդրութեան հարիւրէն 60ը ոչ աւետարանականները կը կազմեն: Նախարկութարանի մը պակասը միշտ զգալի եղած էր թէպէտ, բայց կարելի եղած էր այս պէտքին դոհացում տալ: Յառաջիկայ գաղթական շրջանին համար որոշուած է նախակրթարանի առաջին 1-2 կարգերէն բաղկացեալ գաղթի մը ունենալ, որուն ուսուցչութիւնը հրաւիրուած է արդէն: Ժողովուրդին մէջ տաք խանդավառութիւն մը յառաջ բերած է այս:

Ազիզիյէի Հայ Աւետ. Եկեղեցւոյ վարչական ժողովը կարգ մը երիտասարդներու օժանդակութեամբ, Պազար երեկոյթ մը սարքած էր 20 Յուլիս, 1929, երեքշաբթի երեկոյեան ժամը ճիշդ 8.30 ին Մ. Բ. վարժարանին (Boys' High School) նախապատրաստական բաժնին բակը: Հասոյթը յատկացուած էր եկեղեցւոյ շէնքին համար:

Ոչ մէկ ջանք խնայուած չէր այս Պազարը զուարթ գործնելու համար: Տեսակ տեսակ պտուղներ, անուշիղէններ ու խաղեր մեծ փայլ կուտային երեկոյթին: Նուէրներուն քանակն ու որակը լաւ էին, երանի թէ աւելի շատեր իրենց նուէրներով մասնակցած ըլլային այս բարեհաճ տակ գործին:

Շատ ուրախ մթնոլորտ մը ստեղծուած էր: Հոս ու հոն խումբ խումբ երիտասարդներ, ուրիշ տեղեր ծիրեր և չափահասներ, իսկ կշիռքին և զանազան հայեկներուն զիմացը տմէն տալիքէ անձեր կ'ուտէին, կը խմէին, կը խօսակցէին զուարթօրէն:

Մի քանի անուշ երաժշտական կըտորներ երեկոյթի յաջողութեան մէջ մեծ բաժին մը ունեցան: Կէս գիշերուան մօտ հիւրերը զոհ տալուութեան տակ մեկնեցան, ուրիշ առթիւ վերադառնալու մեծ փափաքով:

Այս առթիւ կ'ուզենք շնորհաւորել Եկեղեցւոյ վարչական մարմինը և կը յուսանք որ ան ապագային ալ նախաձեռնարկը կ'ըլլայ նմանօրինակ երեկոյթներու:

ՆԵՐԿԱՅ ՄԸ

ՊՈԼՍՈՅ ԱԻԵՏ. ԲԵՄԵՐԸ

Մերձ Արեւիկի մէջ գործող Ամերիկեան Պօրտի միախօնարներուն տարեկան ժողովին առթիւ Կ. Պոլսոյ մէջ Տր. Մէրիլ պատեհութիւնը ունեցած է Էմմանուէլ Աւետ. Եկեղեցին այցելելու կիկակի օր մը, և հոն խօսած է Սուրբ Աւետ. Եկեղեցիներուն մասին: Եկեղեցին միջազգային է և պաշտամունքի լեզուն թուրքերէն, հոգիւն է Վեր. Եղիա Քասունի: Իր խօսած օրը թուրք, Յոյն, Ասորի, Հայ ևւն 200ի մօտ ունկնդիրներ կային: Երբ Եկեղեցիէն դուրս կ'ելլէր Յոյն բարեկամ մը իրեն կը ներկայացնէ երեք թուրքեր, իրքքրիստոնէական եղբայրներ: Միւս երեք աւետարանական Եկեղեցիներուն պաշտամունքը հայերէն լեզուով կը կատարուի: Բերայի Եկեղեցին տակաւին գուրկ է, Կէտիկ Փաշայի մէջ Աւետ. Եկեղեցիին հոգիւն է Վեր. Մանուկեան: Եկեղեցին ունի նախակրթարան մը և Կ. Դպրոցներ, որ ազատ է կրօնական կրթութիւն առնու, որմէ զրկուած են միախօնարական հաստատութիւնները:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

ԾՆՈՒՆԴԻ ԵՐԳԸ

Ազատ քաղաքականութիւն Չարչա Տիֆլիսի
գրումներէն

ԴԼՈՒԽ Ա.

ՄԱՐԼԻԻ ՈՒԻՆ

Ասոր յաջորդեց շունչիւնի խորունկ ձայն մը, իբր թէ վարը, մառանին մէջ մէկը խոշոր ու ծանր չղթայ մը իր ետեէն քաշելով կը պատէր: Սքրուճ այն տեն յիշեց ինչ որ լսած էր թէ ոգիները

իրենց բնական տներուն մէջ չղթաներ քաշելով կը պատին: Մառանի գուռը մեծ շառաչիւնով բացուեցաւ. և Սքրուճ ալ աւելի բարձր կը լսէր չղթաներու ձայնը՝ վարի տախտակամածին վրայ. քիչ հաքը ձայնը սահող ոգիներէն վեր կ'ելլէր, և ապա կ'ողջուէր գէպ ի իր սենեակին դուռը: «Կրճճ, կրճճ», ըսաւ Սքրուճ, «ես չեմ հաւատար ասանկ բաներու»:

Սաղայն և այնպէս Սքրուճ գունատեցաւ, երբ ոգին առանց կանգ առնելու, կղպուս ևւն ալ անցնելով իր սենեակը մտաւ և ճիշտ իր գէմը կայնեցաւ: Ծիշտ նոյն պահուն կրակին վերջին կայծը վեր ցատկէն՝ և իբր թէ գոչեց. «ես կը ճանչնամ զինքը, Մարիին ոգին է,» ու դարձեալ վար ինկաւ ու մարեցաւ: Ամեն կողմ խոր խաւարի մէջ մնաց:

Ծիշտ միւսնոյն գէմքն էր, Մարիի գէմքը, ան կը կենար իր նայուածքը Սքրուճի վրայ սեւեւած, իր զգեստները սովորականին պէս էին. իսկ մէջքը խիստ խոշոր ու մանր չղթայով մը սեղմուած, չղթային միւս ծայրը գետնին վրայ տարածուած, երկար պոչի մը նման: Այս չղթան կազմուած էր դրամապանակներէ, կղպանքներէ, բանալիներէ, տօմարներէ և ծանր քսակներէ, ամէնն ալ երկաթէ շինուած: Իր մարմինը թափանցիկ էր, այնպէս որ երբ Սքրուճ անոր առջևի կողմէն կը նայէր, շատ ուրոշ կրնար տեսնել վերարկուին ետեի երկու կոճակները: Սքրուճ ափ ի բերան չէր ուզեր հաւատալ տեսածին, ու միւսնոյն ատեն չէր կրնար չի հաւատալ, մանաւանդ երբ կը զիտէր անոր մահաստուեր աչքերուն սարսափելի տրտայայտութիւնը. զլխուն ու կզակին վրայ կապուած ճերմակ պատանքին ծալքերը, և «Ո՛հ,» գոչեց վերջապէս Սքրուճ սարսափահար, «ի՞նչ կ'ուզես ինձմէ»:

(Շարունակելի) (6)